Կազմված է 01.11.2018թ.

Տպագրված է 4 օրինակից

Օրինակ 1

Հաստատված է

<<Արժանապատիվ ուղի>>

Կուսակցության 01 «նոյեմբեր» 2018թ.

Հիմնադիր համագումարի

որոշմամբ

Գրանցված է

Հայաստանի Հանրապետության

իրավաբանական անձանց

Պետական ռեգիստրի

գործակալության կողմից

30. 11. 2018թ.

Գրանցման թիվ 211.122.1048227

Հարկ վճարողի հաշվառման համար 05547558

Նախագահ՝

Հ. Մարգարյան

Պետական ռեգիստրի գործակալություն

05

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<<ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ՈՒՂԻ>>

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 <<Արժանապատիվ ուղի>> կուսակցությունը (այսուհետ՝ կուսակցություն) գործում է ՀՀ Սահմանադրության, <<Կուսակցությունների մասին>> Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի և ՀՀ այլ իրավական ակտերի համապատասխան՝ ղեկավարվելով սույն կանանադրությամբ, իր գաղափարական սկզբունքներով և ծրագրով:

1.2 Կուսակցությունը իրավաբանական անձի կարգավիճակ է ձեռք բերում պետական գրանցման պահից, ունի Կուսակցության հայերեն, ռուսերեն, անգլերեն անվանումներով կլոր կնիք՝ իր խորհրդանիշով: Խորհրդանշանը պատկերում է շրջան, որի ներքևի մասում հավերժության խորհրդանիշն է և <<կուսակցություն>> բառը: Կենտրոնական մասում թռչող արագիլն է, որի թևերի վրա պատկերված է Արարատ լեռը, իսկ վերևի մասում՝ <<արժանապատիվ ուղի>> բառերը: Կուսակցությունն ունի դրոշմակնիք, հաշվարկային և այլ հաշիվներ բանկերում՝ ՀՀ դրամով և արժույթով, այլ ռեկվիզիտներ:

1.3 Կուսակցության անվանումն է.

Հայերեն ՝ <<Արժանապատիվ ուղի>> կուսակցություն (հապավումը ՝ ԱՈՒԿ)

Ռուսերեն՝ Партия <<Дастойный путь>>(հապավումը ՝ ПДП)

Անգլերեն ՝ "Decent way" party (հապավումը ՝ DWP)

1.4 Իրավաբանակն հասցեն է ՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Գյումրի, Գ. Նժդեհի 4, 55/ա, հեռ. 093-30-94-52, 041-76-00-00:

1.5 Կուսակցությունը կազմավորվում է ազատորեն՝ իր անդամների և հիմնադիր համագումարի որոշմամբ, ստեղծվում հիմնադիր համագումարում, որի ընթացքում որոշումներ են ընդունվում Կուսակցության հիմնադրման, նրա ծրագրերի ընդունման, կանոնադրության հաստատման, ղեկավար մարմինների, վերահսկողություն իրականացնող մարմինների կազմավորման մասին, ինչպես նաև կազմից ընտրում է մշտապես գործող ղեկավար մարմնի ղեկավար (կամ ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար):

1.6 Կուսակցության հիմնադիրները նրա հիմնադիր համագումարի մասնակիցներն են, որոնք Կուսակցության հիմնադրման մասին որոշումն ընդունելու պահից համարվում են Կուսակցության անդամներ:

1.7 Կուսակցության գործունեությունը հիմնվում է անդամության կամավորության, ինքնակառավարման, անդամների իրավահավասարության, օրինականության, սեռից, ռասայից, մաշկի գույնից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից կախված խտրականության արգելման, կուսակցության անկախության, ինքնակառավարման, կոլեգիալության, գործունեության թափանցիկության, հրապարակայնության և հաշվետվողականության սկզբունքների վրա:

1.8 Կուսակցության ղեկավար մարմիններն ու բոլոր տարածքային ստորաբաժանումները կարող են գտնվել միայն Հայաստանի Հանրապետության տարածքում: Այլ պետություններում կուսակցությունը կարող է ունենալ միայն ներկայացուցչություն:

2. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1 Կուսակցության նպատակն է մարդու ազատ, անվտանգ, արժանապատիվ, բարեկեցիկ ու հպարտ ապրելու և իր իրավունքների իրականացումն երաշխավորելու ու ապահովելու համար ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական և իրավական պետության կերտումն է, որտեղ կգործի իրավունքի գերակայությունը, օրենքի իշխանությունը և իրապես կերաշխավորվոն ու կպաշտպանվեն մարդու ու քաղաքացու սահմանադրական իրավունքներն ու ազատությունները: Կուսակցությունը ձգտում է սոցիալական արդարության, արժանապատվության, օրինականության և բարոյականության համամարդկային արժեքներին համապատասխանող իրավական հասարակության, որը կհանդիսանա ազգային միասնության և ԼՂԸ հիմնախնդրի արդարացի լուծման ամուր երաշխիք:

2.2 Կուսակցության խնդիրներն են. նպաստել Հայաստանի Հանրապետության պետականության ամրապնդմանը, տնտեսական, գիտական և հոգևոր ներուժի հզորացմանը, ժողովրդի համակողմանի զարգացմանն ու բարգավաճմանը, քաղաքական կայունացմանը, քաղաքացիական հասարակության կառուցմանը, արտագաղթի կանխմանը, հայության համախմբմանն ու հայրենադարձությանը, ՀՀ Սահմանադրության շրջանակներում ժողովրդական իշխանությունների կազմավորմանը, Հայոց Ցեղասպանության միջազգային ճանաչմանը և Հայ Դատի արդարացի լուծման, ազգամիջյան վեճերի խաղաղ կարգավորման աջակցմանը: Ժողովրդի առջև ծառացած համազգային հիմնախնդիրները լուծելու նպատակով Կուսակցությունը կարող է դաշինքներ կազմել՝ օրենքով սահմանված կարգով:

3. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄԱԿՑՈՒՄԸ ԵՎ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ

3.1 Կուսակցության անդամ կարող է լինել 18 տարին լրացած ՀՀ յուրաքանչյուր գործունակ քաղաքացի, ով ընդունում է կուսակցության ծրագիրն ու կանոնադրությունը, իր գործունեությամբ նպաստում է կուսակցության ծրագրերի իրականացմանը և մուծում անդամավճար:

3.2 Այլ կուսակցությունների հիմնադիրները սույն կուսակցության հիմնադիր չեն կարող լինել:

3.3 Կուսակցության անդամն ունի անձնական քարտ, անդամատոմս և մուծում է անդամավճար: Անդամավճարի չափը և մուծման կարգը սահմանում է կուսակցության վարչությունը:

3.4 Կուսակցության յուրաքանչյուր անդամ անդամակցում է մեկ սկզբնական կազմակերպության: Բնակության կամ աշխատանքի վայրը փոխելու դեպքում կուսակցության անդամն իր դիմումի համաձայն կարող է տեղափոխվել այլ սկզբնական կազմակերպություն:

3.5 Կուսակցությանն անդամակցելը և նրանից դուրս գալը կամավոր է:

3.6 Կուսակցությանն անդամակցումը կատարվում է քաղաքացու անձնական դիմումի համաձայն, կուսակցության անդամների գրավոր երաշխավորության առկայության դեպքում: Ընդունելություն կատարում է կուսակցության սկզբնական կազմակերպությունը: Կուսակցության անդամի դիմումի համաձայն սկզբնական կազմակերպության խորհուրդը որոշում է կայացնում նրա անդամագրվելու և անդամակցությունը դադարեցնելու մասին:

3.7 Կուսակցության անդամի համար անդամակցության դադարեցման հիմք կարող է հանդիսանալ՝

- Կուսակցության գաղափարախոսությանը կամ ծրագրերին հակասող քարոզչության կամ գործունեություն իրականացնելը,
- Կուսակցության կազմակերպած միջոցառումներին պարբերաբար անհարգալի չմասնակցելը,
- Սույն կանոնադրության պահանջները դիտավորյալ խախտելը կամ կուսակցության մարմինների որոշումները չկատարելը, որն էական վնաս է հասցրել կուսակցության շահերին:

3.8 կուսակցության անդամի հեռացման մասին առաջարկություն է ներկայացնում կուսակցության սկզբնական կազմակերպության խորհուրդը, որը հաստատում է համապատասխան համայնքային կազմակերպության ընդհանուր ժողովը:

3.9 Կուսակցության անդամի կողմից սույն կանոնադրության պահանջները խախտելու կամ կուսակցության մարմինների որոշումները չկատարելը, որը կուսակցության շահերին չի պատճառել էական վնաս, առաջացնում է կարգապահական պատասխանատվություն՝սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:

4. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Կուսակցության անդամը կարող է, իրավունք ունի՝

4.1 Ընտրել և ընտրվել կուսակցության և նրա մարզային, տարածքային, համայնքային ու սկզբնական կազմակերպության ղեկավար և վերահսկողություն իրականացնող մարմիններում.

4.2 ներկա լինելու կուսակցության համագումարի նիստերին, ծանոթանալու կուսակցության մարմինների արձանագրություններին, ստանալու նրանց ընդունած որոշումների պատճենները, տեղեկատվություն ստանալու կուսակցության ու նրա ղեկավար մարմինների գործունեության վերաբերյալ, ստանալու փաստաթղթերի պատճեններ՝ կուսակցության կանոնադրության փոփոխությունների, գույքի կառավարումից ստացած դրամական միջոցների վերաբերյալ, ինչպես նաև ստանալու կուսակցության ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացրած անկախ աուդիտորի եզրակացությունը, բողոքարկելու կուսակցության մարմինների որոշումներն ու գործողությունները, կամովին դադարեցնելու իրենց անդամակցությունը:

4.3 Մասնակցել կուսակցության մարմինների աշխատանքներին.

4.4 Հայտնել իր դիրքորոշումը քննարկվող բոլոր հարցերի վերաբերյալ, բարձրաձայնել ցանկացած հարց.

4.5 Բողոքարկել կուսակցության մարմինների ընդունած ցանկացած որոշում.

4.6 Մասնակցել իր անձին կամ գործունեությանը վերաբերող հարցերի քննարկմանը:

5. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5.1 Կատարել սույն կանոնադրության պահանջները և կուսակցության ղեկավար մարմինների որոշումները, գործել կուսակցության ծրագրի շրջանակներում.

5.2 Սահմանված չափով և ժամկետում մուծել անդամավճար.

5.3 Մասնակցել սկզբնական կազմակերպության ժողովներին և կուսակցության այլ միջոցառումներին.

5.4 Իր գործունեության ընթացքում նպաստել կուսակցության գաղափարախոսության ծրագրերի ու նպատակների կենսագործմանը:

6. ԽՐԱԽՈՒՍԱՆՔԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺԵՐԸ

6.1 Կուսակցության անդամների խրախուսելու և տույժեր նշանակելու իրավասություն ունեն համապատասխանաբար.

- Կուսակցության նախագահը,
- Վարչությունը,
- Մարզային խորհուրդը,
- Տարածքային կազմակերպությունների խորհուրդները,
- Համայնքային կազմակերպությունների խորհուրդները,
- Սկզբնական կազմակերպությունների խորհուրդները,

6.2 Խրախուսանքի միջոցներն են՝

- Շնորհակալություն հայտնելը (բանավոր կամ գրավոր՝ անձնական գործերին կցումով),
- Դրամական պարգևատրումը,
- Կուսակցության պատվոգրով պարգևատրումը,

6.3 Տույժի միջոցներն են՝

- Նախազգուշացումը,
- Դիտողությունը (երեք դիտողությունը համարժեք է մեկ նկատողության),
- Նկատողությունը՝ անձնական գործերին կցումով,
- Կուսակցության անդամակցության կասեցումը,
- Կուսակցությունից հեռացումը:

6.4 Կուսակցության կառավարման խորհուրդը կամ վարչությունն իրավասու են համաձայն վարչության կանոնակարգերի և իրենց որոշումների հիման վրա անմիջականորեն կասեցնել որևէ անդամի լիազորությունները կամ հեռացնել նրանց կուսակցության շարքերից, եթե նա կատարել է քրեորեն հետապնդելի արարք, զրպարտել է կուսակցության մեկ այլ անդամի, գործում է կուսակցության ընդհանուր քաղաքականության դեմ, կուսակցական կարգապահությունը խախտող կամ կուսակցությանը վարկաբեկող արարքներ է թույլ տվել:

6.5 Կուսակցության տույժերի նշանակման հարցերը քննարկվում են կուսակցության անդամի մասնակցությամբ, սակայն, եթե նա պատշաճ կարգով տեղեկացվելուց հետո չի ներկայանում նիստի, կուսակցական մարմինն իրավասու է այդ մասին ընդունել հատուկ որոշում և հարցը քննարկել նրա բացակայությամբ:

7. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

7.1 Կուսակցությունը կազմված է սկզբնական կազմակերպություններից, որոնք հանդիսանում են կուսակցության տարածքային ստորաբաժանումները, ինչպես նաև

համայնքային, տարածքային և մարզային կազմակերպություններից, որոնք հանդիսանում են կուսակցության կառուցվածքային ստորաբաժանումները: Անհրաժեշտության դեպքում կուսակցությունը կարող է ձևավորել դաշինքներ, հանձնաժողովներ և աշխատանքային, ինչպես նաև համակարգող մարմիններ, արանց կազմը և քանակը սահմանվում է կուսակցության համապատասխան մարմինների կողմից:

8. ՍԿԶԲՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

8.1 Կուսակցության սկզբնական կազմակերպություններն ստեղծվում են կուսակցության առնվազն 5 անդամների առկայության դեպքում:

8.2 Սկզբնական կազմակերպության բարձրագույն ղեկավար մարմինն ընդհանուր ժողովն է: Ժողովը իրավազոր է մասնակիցների 2/3-ի ներկայության դեպքում: Ժողովի որոշումներն ընդունվում են մասնակիցների թվի կեսից ավելի ձայներով: Կուսակցության շարքերից հեռացնելու մասին որոշումները հաստատվում են վարչության կողմից: Ժողովները տեղի են ունենում ոչ պակաս քան տարին 2 անգամ՝ սեփական ժամանակացույցի համաձայն: Արտահերթ ժողովները տեղի են ունենում կազմակերպության նախագահի, խորհրդի նախաձեռնությամբ կամ անդամների 1/3- պահանջով:

8.3 **Ժողովը իրավասու է՝**

- Ընդունել որոշումներ համայնքի, տարածքի մասշտաբով միջոցառումներ իրականացնելու նպատակով,
- Հայտնել կարծիքներ և առաջարկություններ վերադաս կազմակերպությունների որոշումների, գործունեության վերաբերյալ,
- Ընտրել սկզբնական կազմակերպության նախագահ և փոխնախագահ, որոնք 2 տարի ժամկետով համապատասխանաբար հաստատվում են կուսակցության կառավարման խորհրդի, վարչության և մարզային կառույցի խորհրդի կողմից,
- Ընտրել սկզբնական կազմակերպության խորհուրդ 2 տարի ժամկետով,
- Հաստատել խորհրդի նիստերի ժամանակացույցը,
- Գնահատական տալ խորհրդի աշխատանքներին, նախագահի հաշվետվությանը
- Ընտրել տարածքային, մարզային կոնֆերանսների և կուսակցության համագումարի պատվիրակներ,
- Հաստատել կուսակցության նոր անդամների ընդունելության կամ հեռացման մասին խորհրդի որոշումը,
- Հաստատել խորհրդի աշխատանքային ծրագրերը,
- Կուսակցության ղեկավար մարմիններում պատվիրակել իր ներկայացուցչին, հետ կանչել նրան կամ փոխարինել մեկ ուրիշով,

- Սկզբնական կազմակերպության ժողովի որոշումը պարտադիր է բոլոր անդամների համար և այն կարող է բողոքարկվել վերադաս մարմին,
- Սկզբնական կազմակերպության ընթացիկ ղեկավարումը ժողովների միջև եղած ժամանակահատվածում կատարվում է նախագահի կամ նրա հանձնարարությամբ՝ փոխնախագահի կողմից,
- Կուսակցության 5-9 անդամների առկայության դեպքում սկզբնական կազմակերպության անդամների հիմնադիր կամ հաշվետու-վերընտրական ժողովն ընտրում է կազմակերպության նախագահ և փոխնախագահ 2 տարի ժամկետով, 10 և ավելի անդամների դեպքում նաև խորհուրդ 2 տարի ժամկետով, որի թվական կազմը սահմանում է ընդհանուր ժողովը,
- Հաշվետու վերընտրական ժողովները տեղի են ունենում 2 տարին մեկ անգամ՝ ըստ կուսակցության քաղաքական խորհրդի հաստատած ժամանակացույցի:

8.4 **Խորհուրդը**

- Խորհրդի նիստերը տեղի են ունենում ամիսը 2 անգամ: Նիստն իրավազոր է եթե նրան մասնակցում են անդամների առնվազն կեսը, որոշումներն ընդունվում են մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ: Խորհրդի արտահերթ նիստը տեղի է ունենում նախագահի նախաձեռնությամբ կամ խորհրդի անդամների 1/3-ի պահանջով,
- Լսում են նախագահի հաշվետվությունը կատարած ընթացիկ աշխատանքների մասին
- Ընդունում է առանձին միջոցառումներ կազմակերպելու մասին որոշումներ,
- Հաստատում է ընդհանուր ժողովի օրակարգի նախագիծը, անցկացման տեղն ու ժամկետը,
- Ընդունում է առանձին միջոցոռումներ կազմակերպելու մասին որոշումներ,
- Կատարում է ընթացիկ այլ աշխատանքներ:

8.5 **Նախագահը**

- Պատասխանատու է կուսակցության վերադաս մարմինների որոշումների կատարման համար,
- Կազմակերպում է միջոցառումներ համայնքի, տարածքի մասշտաբով,
- Հետևում է կազմակերպության առանձին անդամներին տրված հանձնարարությունների կատարմանը,
- Խորհրդին հաշվետվություն է տալիս ընթացիկ աշխատանքների վերաբերյալ,
- Խորհրդի անդամների միջև կատարում է աշխատանքի բաշխում, մասնակցում է համայնքային և տարածքային կազմակերության և մարզային խորհրդի աշխատանքներին:

8.6 **Փոխնախագահը**

- Փոխարինում է նախագահին նրա բացակայության դեպքում,

- Նախագահի հանձնարարությամբ իրականացնում է որոշակի աշխատանքներ և պատասխանատվություն է կրում դրանց կատարման համար:

9. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

9.1 Կուսակցության սկզբնական կազմակերպությունները միավորվում են համայնքային կազմակերպության մեջ, որը գործում է սկզբնական կազմակերպությունների համար սույն կանոնադրությամբ նախատեսված կարգով և սկզբուններով: Համայնքային կազմակերպության ղեկավար մարմիններն են՝ համայնքային կազմակերպության ընդհանուր ժողովը, նախագահը և խորհուրդը:

9.2 Համայնքային կազմակերպության ընթացիկ ղեկավարումը ժողովների միջև ընկած ժամանակահատվածում կատարվում է խորհրդի կողմից, որը բաղկացած է 15-21 անդամներից: Համայնքային կազմակերպության խորդուրդն ընտրվում է կազմակերպության ընդհանուր ժողովում՝ մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ 2 տարի ժամկետով: Համայնքային կազմակերպության նախագահն ընտրվում է համայնքային կազմակերպության խորհրդի կողմից:

9.3 **Խորհուրդը**

- Լսում է կազմակերպության նախագահի և խորհրդի անդամների հաշվետվությունը կատարած աշխատանքների մասին,
- Հաստատում է խորհրդի օրակարգի նախագիծը, Ընդունում է առանձին միջոցոռումներ կազմակերպելու մասին որոշումներ,
- Իրականացնում է սկզբնական կազմակերպության խորհրդի համար սահմանված բոլոր լիաորությունները,
- Լսում է իր սկզբնական կազմակերպությունների խորդուրդների և նրանց նախագահների հաշվետվությունները,
- Խորհրդի նիստը հրավիրվում է ամիսը մեկ անգամ,
- Խորհուրդը իրավասու է ընդունել որոշումներ, եթե մասնակցում են անդամների 2/3-ից ավելին, որոշումներն ընդունվում են ձայների պարզ նեծամասնությամբ,
- Խորհրդի նիստերը վարում է նախագահը, նրա բացակայության դեպքում փոխնախագահներից որևիցե մեկը նախագահի հանձնարարությամբ:

9.4 **Նախագահը**

- Պատասխանատու է կուսակցության վերադաս մարմինների որոշումների կատարման համար,
- Կազմակերպում է միջոցառումներ համայնքի, տարածքի մասշտաբով,
- Հետևում է կազմակերպության առանձին անդամներին տրված հանձնարարությունների կատարմանը,

- Խորհրդին հաշվետվություն է տալիս ընթացիկ աշխատանքների վերաբերյալ,
- Խորհրդի անդամների միջև կատարում է աշխատանքի բաշխում, մասնակցում է համայնքային և տարածքային կազմակերության և մարզային խորհրդի աշխատանքներին:

9.5 **Փոխնախագահը**

- Փոխարինում է նախագահին նրա բացակայության դեպքում,
- Նախագահի հանձնարարությամբ իրականացնում է որոշակի աշխատանքներ և պատասխանատվություն է կրում դրանց կատարման համար:

10. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

10.1 Համայնքային կազմակերպությունները միավորվում են տարածքային կազմակերպությունների մեջ, որոնք գործում են տարածքային կազմակերպությունների համար սույն կանոնադրությամբ նախատեսված կարգով, իրավասություններով և սկզբունքներով:

10.2 Տարածքային կազմակերպության ղեկավար մարմիններն են՝ ընդհանուր ժողովը և խորհուրդը:

10.3 Տարածքային կազմակերպության ընդհանուր ժողովն հրավիրվում է ոչ պակաս քան տարին մեկ անգամ:

11. ՄԱՐԶԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

11.1 Տարածքային կազմակերպությունները միավորվում են մարզային կազմակերպությունների մեջ:

11.2 Մարզային կազմակերպության ղեկավար մարմինը մարզային համաժողովն է (կոնֆերանս), որն անցկացվում է ոչ պակաս, քան տարին մեկ անգամ:

11.3 Համաժողովի պատվիրակների թիվը որոշվում է մարզային խորհրդի կողմից՝ ըստ սկզբնական կազմակերպությունների անդամների թվի: Համաժողովը իրավազոր է եթե ներկա են պատվիրակների 2/3-ը, որոշումներն ընդունվում են մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ:

11.4 **Համաժողովը**

- Ընտրում է մարզային խորհուրդ 2 տարի ժամկետով,
- Լսում է մարզային խորհրդի հաշվետվությունը,
- Լսում է առանձին համայնքային և տարածքային կազմակերպությունների նախագահների հաշվետվությունները,

- Ընդունում է գործունեության ծրագրեր մարզի մասշտաբով,
- Քննարկում է իրավասության այլ հարցեր:

11.5 **Խորհուրդը**

- Մարզային կազմակերպության խորհուրդը համաժողովների միջև ընկած ժամանակահատվածում իրականացնում է մարզային, մարզի տարածքային և համայնքային կազմակերպությունների ընդհանուր ղեկավարումն ու համակարգումը:
- Խորհրդի անդամներն ընտրվում են սկզբնական կազմակերպությունների նախագահների և համաժողովի պատվիրակների կազմից 2 տարի ժամկետով:
- Խորհրդի թվական կազմը սահմանում է համաժողովը
- Խորհուրդն իր աշխատանքներն իրականացնում է նիստերի միջոցով ոչ պակաս, քան ամիսը մեկ անգամ: Նիստն իրավազոր է անդամների 2/3-ի մասնակցության դեպքում, որոշումներն ընդունվում են մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ:
- Արտահերթ նիստերը հրավիրվում են նախագահի նախաձեռնությամբ կամ խորհրդի անդամների 1/3-ի պահանջով: խորհրդի որոշումները կարող են բողոքարկվել կուսակցության քաղաքական խորհրդին:
- Մարզային կազմակերպությունը ղեկավարում է դրա նախագահը, որը ընտրվում է կուսակցության վարչության կողմից:

11.6 **Նախագահը**

- Պատասխանատու է կուսակցության վերադաս մարմինների որոշումների կատարման համար,
- Կազմակերպում է միջոցառումներ մարզի մասշտաբով,
- Հետևում է կազմակերպության առանձին անդամներին տրված հանձնարարությունների կատարմանը,
- Խորհրդին հաշվետվություն է տալիս ընթացիկ աշխատանքների վերաբերյալ,
- Խորհրդի անդամների միջև կատարում է աշխատանքի բաշխում, մասնակցում է համայնքային և տարածքային կազմակերության և մարզային խորհրդի աշխատանքներին:
- Ելնելով անհրաժեշտությունից՝ կուսակցության քաղաքական խորհուրդը ձևավորում է մի շարք մարզային կազմակերպությունների համակարգող մարմիններ:

12. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

12.1 Կուսակցության ղեկավար մարմիններն են՝ կուսակցության համագումարը, կուսակցության նախագահը, կառավարման խորհուրդը, վարչությունը և քաղաքական խորհուրդը:

12.2 Կուսակցության բարձրագույն ղեկավար մարմինը համագումարն է, որը գումարվում է կառավարման խորհրդի կողմից 2 տարին մեկ անգամ: Արտահերթ համագումար հրավիրվում է նախագահի, կառավարման խորհրդի անդամների 2/3-ի առաջարկությամբ կամ վարչության անդամների 1/3-ի պահանջով վարչության կողմից: Համագումարի պատվիրակներին ընտրվում են մարզային և տարածքային կազմակերպությունների ընդհանուր ժողովների կողմից՝ կուսակցության վարչության կողմից սահմանված պատվիրակների ներկայացուցչական նորմին համապատասխան: Համագումարի պատվիրակներից յուրաքանչյուրը ունի մեկ ձայնի իրանունք: Համագումարի աշխատանքներին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են մասնակցել հրավիրվածներ: Համագումարն իրավազոր է, եթե նրան մասնակցում են պատվիրակների թվի 1/2-ը, ոչ պակաս քան 100 պատվիրակ:

12.3 Կուսակցության կանոնադրության և ծրագրի ընդունման, գրանցում, փոփոխություններ և լրացումներ կատարելու, կուսակցության վերակազմակերպման, լուծարման մասին որոշումներն ընդունվում են կուսակցության համագումարի պատվիրակների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

12.4 Մնացած բոլոր հարցերով որոշումներն ընդունվում են համագումարին ներկա (գրանցված) պատվիրակների ձայների մեծամասնությամբ:

12.5 Կուսակցությամ վարչության որոշումը համագումարի հրավիրման, նրա օրակարգի անցկացման տեղի և ժամանակի ներկայացուցչական նորմի մասին հայտնվում է համագումարի բացումից 2 ամիս անց, իսկ արտահերթ համագումարի դեպքում՝ առնվազն 20 օր առաջ:

13. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

Կուսակցության բարձրագույն ղեկավար մարմինը կուսակցության համագումարն է:

Համագումարը՝

- Հաստատում է իր օրակարգը, աշխատակարգը և ընտրում աշխատանքային մարմիններ,

- Որոշում է կուսակցության քաղաքականությունը, քննարկում և ընդունում է կուսակցության գործունեության ծրագիրը,
- Լսում է հաշվետու ժամանակաշրջանում կառավարման խարհրդի, վարչության և վերահսկիչ հանձնաժողովի հաշվետվությունները կատարած աշխատանքների մասին և ընդունում համապատասխան որոշումներ,
- Հաստատում է կուսակցության կանոնադրությունը, ընդունաում է ծրագիրը, լրացումներ և փոփոխություններ կատարում դրանցում, հաստատում նոր խմբագրությամբ ծրագիրն ու կանոնադրությունը,
- Ընտրում է կուսակցության նախագահ,
- Ընտրում է կուսակցության վարչության կազմը 2 տարի ժամկետով,
- Ընտրում է կառավարման խորհրդի կազմը 2 տարի ժամկետով,
- Ընտրում է վերահսկիչ հանձնաժողովի կազմը 2 տարի ժամկետով,
- Հաստատում է կուսակցության վերահսկիչ հանձնաժողովի կանոնակարգը,
- Լսում է կուսակցության կողմից ընտրված պատգամավորական խմբակցության կամ առանձին պատգամավորների հաշվետվությունը և անհրաժեշտության դեպքում (պատգամավորի հետ կանչման մասին օրենքի առկայության դեպքում), սահմանված կարգով հետ կանչում նրանց,
- Ընդունում է որոշումներ, բանաձևեր, դիմումներ, հայտարարություններ,
- Կայացնում է որոշում կուսակցության վերակազմակերպման կամ լուծարման մասին,
- Կուսակցության կանոնադրության և ծրագրի ընդունման, դրանցում փոփոխություններ և լրացումներ կատարելու, կուսակցության վերակազմակերպման, լուծարման մասին որոշումներն ընդունվում են կուսակցության համագումարի ընտրված պատվիրակների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:
- Կուսակցության համագումարի որոշումները, բացառությամբ սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերի, ընդունվում են համագումարին ներկա (գրանցված) պատվիրակների ձայների մեծամասնությամբ:

14. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԸ

14.1 Համագումարի վարչության և կառավարման խորհրդի որոշումներն իրականացնելու, վարչության և կառավարման խորհրդի աշխատանքները ղեկավարելու, կուսակցության մարզային և տարածքային կազմակերպությունների և հանձնաժողովների աշխատանքները համախմբելու համար համագումարն ընտրում է կուսակցության նախագահ:

14.2 Նախագահի բացակայության դեպքում նախագահի կարգադրությամբ փոխնախագահներից մեկն իրականացնում է նախագահի լիազորությունները:

14.3 **Նախագահը՝**

- Ղեկավարում է կառավարման խորհրդի, վարչության և քաղաքական խորհրդի նիստերը,
- Անհրաժեշտության դեպքում իր նախաձեռնությամբ հրավիրում է վարչության ընդլայնված նիստ՝ անձամբ ներկայացնելով հրավիրվածների ցուցակը,
- Կուսակցության շահերն է ներկայացնում պետական և հասարակական կազմակերպություններում,
- Կուսակցության անունից հաստատում է բոլոր անհրաժեշք փաստաթղթերը,
- Վարչության անունից հաշվետվությամբ հանդես է գալիս կուսակցության համագումարում,
- Կազմակերպում է կուսակցության գործունեությունը,
- Սահմանում է փոխնախագահների կողմից համակարգվող ոլորտները, ինչպես նաև իր կողմից անմիջապես համակարգվող ոլորտները,
- Կազմավորում է կուսակցության աշխատակազմը,
- Իրականացնում է աշխատակազմի ընդհանուր ղեկավարությունը,
- Կատարում է քաղաքացիների ընդունելություն,
- Հանդիսանում է կուսակցության վարկի կարգադրիչը,
- Իր բացակայության դեպքում կուսակցության նախագահի լիազորությունները հանձնում է փոխնախագահներից մեկին,
- Կուսակցության անունից ԱԺ-ին կամ կառավարությամը ներկայացնում է առաջարկություններ, օրենքների նախագծեր, կատարում է հայտարարություններ,
- Հարաբերություններ է հաստատում այլ կուսակցությունների և կազմակերպությունների հետ
- Անձամբ կամ նրա հանձնարարությամբ փոխնախագահներից մեկը ներակայացնում է Կուսակցությունը միջազգային հարաբերություններում,
- Տնօրինում է Կուսակցության դրամական միջոցները և գույքը:

15. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆԸ

15.1 Վարչությունը հանդիսանում է կուսակցության ղեկավար մարմին, որն օպերատիվ կարգով քննարկում և լուծում է կուսակցության գործունեությանն առնչվող քաղաքական խնդիրները:

15.2 Վարչությունն ընտրվում է համագումարի ընտրված պատվիրակների ձայների մեծամասնությամբ:

15.3 **Վարչությունը՝**

- Հաստատում է Կուսակցության անդամության տոմսի ձևը, հանձման կարգը,
- Հաստատում է Կուսակցության պատվոգրի ձևը, ներկայացման և հանձման կարգը,

- հաստատում է համագումարի օրակարգի նախագիծը, անցկացման տեղը, ժամկետը, ներկայացուցչական քվոտան,
- Որոշում է կայացնում Կուսակցության տարածքային ստորաբաժանումների և քառուցվածքային ստորաբաժանումների (տարածքային, համայնքային և մարզային կազմակերպությունների) ստեղծման մասին,
- Լուծարում է տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումները,
- Ստեղծում է հանձնաժողովներ, մասնագետների խմբեր, ակումբներ,
- Սահմանում է Կուսակցության անդամավճարի չափ և մուծման կարգը,

15.4 Վարչության նիստ հրավիրվում է առնվազն 2 ամիսը մեկ անգամ: Արտահերթ նիստ հրավիրվում է վարչության անդամների 1/3-ի պահանջով:

15.5 Վարչությունն իրավասու է ընդունել որոշումներ, եթե մասնակցում են անդամների 2/3-ից ավելին: Որոշումները ընդունվում են մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ:

15.6 Վարչության անդամին անվստահության հայտնելու դեպքում կուսակցության վարչության որոշմամբ կասեցվում են նրա լիազորությունները՝ մինչև առաջիկա համագումարը: Վարչության նիստերը վարում է նախագահը, իսկ նրա բացակայության դեպքում՝ տեղակալներից որևէ մեկը նախագահի հանձնարարությամբ:

16. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

16.1 Կառավարման խորհուրդը հանդիսանում է կուսակցության մշտական գործող ղեկավար մարմին, որը համագումարների միջև ընկած ժամանակահատվածում իրականացնում է համագումարի ընդունած որոշումները, քննարկում և լուծում կուսակցության գործունեության հետ կապված խնդիրները:

16.2 Կառավարման խորհուրդն ընտրվում է համագումարի ընտրված պատվիրակների ձայների պարզ մեծամասնությամբ: Քվեարկության կարգը (բաց կամ գաղտնի), խորհրդի անդամների քանակը սահմանում է համագումարը:

16.3 **Կառավարման խորհուրդը՝**

- Իրագործում է կուսակցության համագումարի որոշումները և կանոնադրության պահանջները, վերահսկում նրանց կատարումը կազմակերպությունների կողմից,
- Ընտրում է հանձնաժողովների նածագահներին, լսում նրանց հաշվետվությունները, անհրաժեշտության դեպքում դադարեցնում նրանց լիազորությունները,
- Քննարկում և հաստատում է տեղեկան ինքնակառավարման մարմինների ընտրություններին կուսակցության համայնքային կազմակերպությունների կողմից առաջարկվող թեկնածուներին,

- Առաջարկություն է ներկայացնում համագումարին համապետական իշխանության մարմիններին ընտրություններին մասնակցելու մասին, հաստատում է ընտրովի պաշտոններին հավակնող անձանց ցանկը,
- Համագումարի քննարկմանն է ներկայացնում կուսակցության ռազմավարությունը և մարտավարությունը,
- Որոշում է կայացնում ազգային ժողովի ընտրություններում պատգամավորության թեկնածուների առաջադրման վերաբերյալ: Խորհրդի այդ նիստին մասնակցում են կուսակցության տարածքային ստորաբաժանումների ղեկավարները:
- Առաջարկություն է ներկայացնում վարչությամը՝ բեկանել սկզբնական, համայնքային և տարածքային կազմակերպության որոշումները, եթե դրանք հակասում են կուսակցության գաղափարական սկզբունքներին կամ քաղաքականությանը,
- Լսում է կառավարման խորհրդի անդամների հաշվետվությունները, որոշումներ է ընդունում այդ կապակցությամբ,
- Նախապատրաստում է վարչության նիստերի աշխատանքները,
- Համագումարի օրակարգի և որոշումների նախագծերը ներկայացնում է սկզբնական, համայնքային և տարածքային կազմակերպությունների քննարկմանը,
- Անդամների ձայների 2/3-ով կարող է կառավարման խորհրդի անդամի դիմումի համաձայն դադարեցնել նրա անդամակցությունը,
- Անդամների ձայներ 3/4-ով կարող է՝
  - ա. Կասեցնել անդամակցությունը կառավարման խորհրդին 3 կամ 6 ամսով,
  - բ. դադարեցնել կառավարման խորհրդի անդամի լիազորությունները:

16.4 Կառավարման խորհրդի անդամի խրախուսումը կամ կարգապահական տույժի ենթարկումը կատարվում է կառավարման խորհրդի որոշմամբ:

16.5 Կառավարման խորհրդի անդամների թափուր տեղերում կարող են ընտրվել նոր անդմաներ, որոնց թիվը չպետք է գերազանցի կառավարման խորհրդի անդամների թվի 1/5-ը:

16.6 Կառավարման խորհուրդն իր աշխատանքներն իրականացնում է նիստերի միջոցով, որոնք հրավիրում է կուսակցության նախագահը ոչ պակաս, քան ամիսը մեկ անգամ:

16.7 Արտահերթ նիստ հրավիրվում է նախագահի կողմից կամ կառավարման խորհրդի անդամների 1/3-ի պահանջով: Նիստն իրավազոր է անդամների 2/3-ի առկայության դեպքում, որոշումներն ընդունվում են մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ: Քվեարկության ձևը որոշում է կառավարման խորհուրդը:

16.8 Կառավարման խորհրդի անդամներն իրավասու են խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցել Կուսակցության բոլոր մարմինների նիստերին:

16.9 Կառավարման խորհրդի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են մասնակցել ՀՀ օրենսդիր և գործադիր մարմիններում ընդգրկված Կուսակցության անդամները:

16.10 Կուսակցության նախագահն ի պաշտոնե հանդիսանում է Կուսակցության գործադիր մարմնի ղեկավարը, կառավարման խորհրդի նախագահը: Կառավարման խորհրդի նիստերը վարում է կուսակցության նախագահը, վերջինիս բացակայության դեպքում՝ նրա հանձնարարությամբ փոխնախագահներից մեկը:

17. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

17.1 Քաղաքական խորհուրդը Կուսակցության այն մարմինն է, որը կազմավորվում է առավել հնչեղություն ունեցող կամ օպերատիվ հարցեր քննարկելու և որոշումներ կայացնելու նպատակով:

17.2 Կուսակցության քաղաքական խորհրդի կազմը հաստատում է Կուսակցության կառավարման խորհուրդը՝ Կուսակցության նախագահի առաջարկությամբ:

17.3 Քաղաքական խորհուրդը ընտրվում է կուսակցության անդամներից հասարակության մեջ հեղինակություն ունեցող հասարակական և քաղաքական գործիչներից:

17.4 Քաղաքական խորհուրդն իր նիստերն անցկացն ում է ըստ անհրաժեշտության, բայց ոչ ուշ քան ամիսը մեկ անգամ:

18. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՓՈԽՆԱԽԱԳԱՀՆԵՐԸ

Կուսակցության նախագահի առաջարկությամբ կառավարման խորհուրդը ընտրում է է փոխնախագահներ՝ քաղաքական, կազմակերպչական և այլ հարցերով:

19. ՎԵՐԱՀՍԿԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

19.1 Կուսակցության ղեկավար մարմինների որոշումների կատարման, կառավարման խորհրդի, վարչության, կուսակցության տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումների (մարզային, տարածքային և համայնքային կազմակերպությունների) ընդհանուր, ինչպես նաև կազմակերպչական, ֆինանսական գործունեությունը վերահսկելու նպատակներով համագումարը ընտրում է վերահսկիչ հանձնաժողով:

19.2 Վերահսկիչ հանձնաժողոը ղեկավարվում է համագումարում հաստատված կանոնակարգով և հաշվետու է համագումարին:

19.3 Հանձնաժողովի անդամների թվական կազմը սահմանում է համագումարը:

19.4 Վերահսկիչ հանձնաժողովի անդամն այլ ընտրովի մարմնի անդամ լինել չի կարող:

19.5 Մարզային, տարածքային, համայնքային կազմակերպություններում, ինչպես նաև տարածքային ստորաբաժանումներ հանդիսացող սկզբնական կազմակերպություններում նույն կարգով և լիազորություններով ընտրվում են վերահսկիչներ՝ 2 տարի ժամկետով:

20. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ ԵՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

20.1 Կուսկացության գույքը գոյանում է՝

- Կուսակցությանն անդամագրվելու համար սահմանված չափով պարբերաբար կատարվող վճարումներից (անդամավճարներց)
- <<Կուսակցությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված նվիրատվություններից
- <<Կուսակցությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված կարգով բյուջետային ֆինանսավորումից
- Օրենքով չարգելված այլ աղբյուրներց

20.2 Կուսակցության անդամը սեփականության իրավունք չունի Կուսակցությամը պատկանող գույքի կամ դրա մասի նկատմամբ:

20.3 Կուսակցությունը պատասխանատվություն չի կրում իր անդամների պարտավորությունների համար, իսկ կուսակցության անդամը պատասխանատվություն չի կրում կուսակցության պարտավորությունների համար:

20.4 Կուսակցության միջոցները ծախսվում են կուսակցության խնդիրների և նպատակների իրականացման համար:

20.5 Նախահաշիվների կատարման մասին հաշտեվտությունն կուսակցության վերահսկիչ հանձնաժողոցի ստուգումների ակտի հետ միասին ներակայացվում և հաստատվում է կառավարման խորհրդում տարին մեկ անգամ: Կուսակցության տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումների գույքը կառավարվում է տարածքային ստորաբաժանումների կողմից:

21. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

21.1 Կուսակցության վերակազմակերպման և լուծարման մասին որոշում կայացվում է Կուսակցության համագումարի կողմից կամ օրենքով սահմնված կարգով: Լուծարման մասին որոշումից հետո համագումարն ընտրում է լուծարային հանձնաժողով:

Կուսակցության վերակազմակերպումը կամ լուծարումը իրականացվում է << ճրենսդրությամբ սահմանված կարգով:

21.2 Կուսակցության լուծարման դեպքում նրա գույքը ուղղվում է սույն կանոնադրությամբ նախատեսված նպատակների, իսկ եթե դա անհնար է, ապա փոխանցվում է պետական բյուջե: